



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների
ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական
զարգացման գործում

Առարկան՝ ինֆորմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Քրիստինե Կարապետյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թաթուլի
Թ. Կրպեյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022



Բովանդակություն

Ներածություն.....	3
Հետազոտական աշխատանքի խնդիրն ու նպատակը.....	4
Տեղեկատվական տեխնոլոգիաներ.....	5
Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների դրական ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում.....	9
Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների բացասական ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում.....	12
Եզրակացություն.....	16
Օգտագործված գրականություն.....	17
Հավելված.....	18

Ներածություն

Արդի ժամանակաշրջանում առանց տեղեկատվական տեխնոլոգիաների, մեր օրերում աներևակայելի է առաջընթացը կրթության և հասարակական գործունեության ցանկացած բնագավառում:

Գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը՝ տեղեկատվությունը դարձնելով մարդու կյանքի անբաժանելի մասը: Դրանք են թելադրում կյանքի ընթացքն ու ուղղորդում ճանապարհը: Երբորդ հազարամյակի մարդը հազարավոր թելերով կապված է համացանցին, որից անմասն չեն մնում երեխաները: Ձարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց նորամուծությունների կիրառման այսօր գրեթե անհնար է ապահովել հանրամատչելի և արդյունավետ կրթություն: Ուստի, այստեղ պետք է խնդիր դնել ոչ թե սահմանափակել երեխային օգտվելու տեղեկատվական տեխնոլոգիաներից, այլ երեխայի գիտակցական մակարդակը այնքան բարձրացնել, որ երեխան ինքը գիտակցի և կարողանա ընտրել իրեն անհրաժեշտ ու պիտանի ինֆորմացիան: Այս առումով պետք է հսկայածավալ աշխատանքներ տարվեն նաև ծնողների շրջանում:

Ցավոք սրտի համակարգիչը և հատկապես համացանցը աստիճանաբար մեկուսացնում են երեխաներին իրականությունից, տանում դեպի երևակայական, վիրտուալ աշխարհ: Երեխաները կարող են աստիճանաբար ընդունել համացանցային կամ երևակայական աշխարհի որպես առաջնային, և կենսական խնդիրների լուծումները փնտրել իրականությունից կտրված եղանակներով:

Այսպիսով՝ մեր աշխատանքի նպատակն է համաշխարհային փորձի ուսումնասիրության և կատարած սեփական հետազոտական աշխատանքի միջոցով ցույց տալ տեղեկատվական տեխնոլոգիաների դրական և բացասական ազդեցությունը սովորողի վարքագծի, ընկալունակության, ուշադրության կենտրոնացման և զարգացման վրա::

Աշխատանքը կատարվել է ոլորտում ի հայտ եկած խնդիրների վեր հանման միջոցով դրանց արդիական և օպտիմալ լուծումներ գտնելու համար:



Հետազոտական աշխատանքի խնդիրն ու նպատակը

Ես ուսումնասիրում եմ այս թեման, քանի որ ցանկանում եմ պարզել.

1. Ի՞նչ ազդեցություն են թողնում տեղեկատվական տեխնոլոգիաները սովորողի հոգեբանական զարգացման գործում:

2. Ո՞րն է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը սովորողի կրթության ոլորտում:

Նպատակն է ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը սովորողների հոգեվիճակի վրա, ինչպես նաև զետեղել նյութեր, որոնք կարող են օգնել ուսուցչին և ծնողին:

Մանկավարժական տեսանկյունից քննարկում ենք հետևյալ խնդիրները.

- ✓ Ուսուցման որակի ապահովվում
- ✓ Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները կրթության մեջ
- ✓ Կրթության հոգեբանական, մանկավարժական խնդիրները տեղեկատվական հասարակության պայմաններում
- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը անհատի մտավոր զարգացման վրա
- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաներ ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման վրա¹:

¹ Բայան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր», Երևան: Լույս 1983, էջ 31-33:



Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Նորագույն տեխնոլոգիաները մարդկային կյանքի, ողջ հասարակության համար ստեղծել են նոր աշխարհ: Դրանք են թելադրում կյանքի ընթացքն ու ուղղորդում ճանապարհը: Ներկա դարաշրջանում, մարդ արարածը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը:

Հիմնական բարդությունն այն է, որ մանկավարժական արդեն կատարված ուսումնասիրությունները կորցնում են արդիականությունը՝ մեդիամիջոցների արագ փոփոխման հետևանքով: Աշխատանքային և սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման:

Կրթական համակարգի կատարելագործումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեջ նոր մանկավարժական և տեղեկատվական – հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, որոնք կոչված են առավել ակտիվորեն նպաստելու սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զարգացմանը: Կրթության բնագավառում տեղեկատվական–հաղորդակցական տեխնոլոգիաների շնորհիվ ստեղծվում է ուսումնաճանաչողական մի միջավայր, որը նպաստում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային ու զանգվածային ուսուցման տարբեր խնդիրների լուծմանը: Պաշտոնական կրթությունն այսօր չի կարող հավակնել վերջնական ու լիարժեք՝ գիտելիքների դարբնոցի՝ դերին, քանի որ յուրաքանչյուր հերթական տեղեկատվական պայթյուն չեզոքացնում է նախորդի կարևորությունը: Հետևաբար՝ գիտելիքների պաշարից՝ շատ ավելի կարևոր է դարձել՝ սովորել սովորեցնելու՝ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, հմտություններ ձևավորելու խնդիրը, որի շնորհիվ կրթությունը կարող է դառնալ անընդհատ, շարունակական ուսումնառության ողջ կյանքի ընթացքում:

Կրթության գլխավոր արդյունքներից մեկը պետք է լինի անհրաժեշտ տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելու, հիմնախնդիրները տեսնելու և դրանց լուծման ճանապարհները գտնելու, ստացած գիտելիքները քննադատաբար վերլուծելու և դրանք նորանոր խնդիրների լուծման համար կիրառելու կարողությունները²:

Նորագույն մանկավարժական գիտական գրականության մեջ շեշտը դրվում է հատկապես S2S նորարարությունների ներդրման վրա, որոնք նպատակաուղղված են սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, ուսման դրդապատճառների խթանմանը, նրանց ճանաչողական գործունեության ակտիվացմանը, մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը, քանի որ դրանք նպաստում են ուսումնական գործընթացի արագացմանը, տեղեկատվության բազմակողմանի ներկայացմանը և հաղորդմանը, ուսումնական նյութի յուրացման որակի բարձրացմանը³:

Այժմ ավելի շատ խոսվում է հատկապես <<համակարգչային մանկավարժական տեխնոլոգիաների>> մասին, որոնք ենթադրում են համակարգչային սարքաշարը (համակարգիչ, օժանդակ այլ սարքավորումներ) և ծրագրաշարը (ուսուցողական ծրագրեր, ցանցային տեխնոլոգիաներ) ուսումնական գործընթացում կիրառելու ավգորիթմների մշակում:

Այսօր կրթական համակարգում լայն կիրառություն են ստացել ցանցային տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս ստեղծել ուսումնական հաստատության կրթական պորտալը, անցկացնել հեռավար պարապմունքներ, հանդիպումներ, գիտաժողովներ, խորհրդատվություններ՝ իրական ժամանակում և հետադարձ կապի ապահովմամբ:

Մանկավարժության մեջ խիստ հրատապ ու կարևոր է դառնում նոր ուղղություն՝ մեդիակրթության ի հայտ գալը, որն օգնում է սովորողներին ուսումնասիրել զանգվածային և հաղորդակցության օրինաչափությունները, ազդեցության մեխանիզմները և դրանց մանիպուլյացիաներից պաշտպանելու միջոցները: Մեդիակրթության հիմնական խնդիրներն են՝

- Նախապատրաստել նոր սերնդին ժամանակակից տեղեկատվական հասարակության պայմաններում ապրելուն

2 Աստվածատրյան Մ.Գ., Թերզյան Գ.Հ., 2004, էջ 24-26

3 Аркысова И.В., 2012 стр.36

- Սովորեցնել ճիշտ ընկալել բազմազան ու բազմաբնույթ տեղեկատվությունը
- Հասկանալ գիտակցել սովորողի հոգեկանի վրա ազդեցության մեխանիզմները
- Յուրացնել շփման, հաղորդակցության ոչ լեզվական ձևերը:

Դպրոցական կրթության զարգացման ներկա փուլում կարևոր է նորագույն տեխնոլոգիաների ներդրումը ուսուցման գործընթացում: Համակարգիչը դպրոցում դիտարկվում է որպես ուսումնառության հիմնական միջոցներից մեկը:

SZS –ի օգտագործումը որակապես փոխում է թե ուսուցչի դերը, թե աշակերտի դերը, ձևավորում է ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ավանդականից տարբեր մի նոր որակ:

SZS –ի կիրառման դրական կողմերն են

- ✓ Ժամանակի տնտեսում, ավելի քիչ ժամանակի ընթացքում ավելի շատ ինֆորմացիա է հաղորդվում:
- ✓ Հեշտացնում է նյութի յուրացման ընթացքը:
- ✓ Դասը սովորողի համար դառնում է ավելի տպավորիչ:
- ✓ Մեծանում է դիտողականության մակարդակը:
- ✓ Մեծանում է առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրությունը:

SZS –ի կիրառման համակարգում տարբերվում են գործունեության երկու տեսակ՝ ուսուցանող և ուսումնական: Առաջինը բնութագրվում է համակարգչի հետ սովորողի անմիջական գործունեությամբ, որը որպես կանոն ընթանում է առանց ուսուցչի միջամտության: Այդպիսի գործունեություն է ծավալվում նաև ինֆորմատիկայի դասերի ժամանակ, երբ սովորողը ինքնուրույն աշխատում է համակարգչով, կատարում է լաբորատոր աշխատանքներ և այլ գործնական առաջադրանքներ: Կոնկրետ ես դասավանդում եմ ինֆորմատիկա և չեմ պատկերացնում իմ դասը առանց այս նորագույն տեխնոլոգիաների:

Երկրորդ տեսակը բնութագրվում է համակարգչի հետ ուսուցչի գործունեությամբ: Այս դեպքում համակարգիչն օգնում է ուսուցչին ուսումնական գործընթացն ուղղորդելու հարցում:

Նորագույն տեխնոլոգիաները կարելի է կիրառել դասադպրոցեսի տարբեր փուլերում: Համակարգչի օգտագործմամբ նոր նյութը հաղորդելիս կարելի է կազմակերպել դաս-դասախոսություն՝ շնորհանդեսի տեսքով, որը հնարավորություն կտա սևեռել սովորողի

ուշադրությունը նյութի առավել կարևոր հարցադրումների վրա:

Իմ աշխատանքի ընթացքում ես օգտագործում եմ պատրաստի ծրագրեր, ստեղծում եմ իմ սեփական շնորհանդեսները, օգտագործում եմ համացանցը կրթական գործունեության մեջ:



Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների դրական ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում

Այսօր ժամանակները փոխել են ամեն ինչ, իրենց կնիքն անգամ մանկության ու պատանեկության վրա են թողել: Սրանք կյանքի կարևոր և հիանալի փուլեր են, որոնք մեզանից յուրաքանչյուրը ուրախությամբ և մեծ սիրով է հիշում: Իսկ իսկական մանկությունը լի է ազնվությամբ, մաքրությամբ, պարզությամբ, միամտությամբ, անհոգ է, ուրախ, առանց պահանջների և կամակորությունների: Եվ հենց մանուկներն ունեն աշխարհում ամենաթանկ բանը՝ մաքուր հոգի ու միտք:

Նախկին բակային և մանկական խաղերին փոխարինելու են եկել հեռուստացույցը, համակարգիչը, բջջային հեռախոսն ու պլանշետը, ինչպես նաև համացանցը:

Այժմ մենք ապրում ենք տեղեկատվության վրա հիմնված, հաղորդակցական կապերով օժտված ժամանակաշրջանում: Գոյատևելու համար մեզ անհրաժեշտ են կապի միջոցներ ու հաղորդակցության տեխնոլոգիաներ:

Նոր տեխնոլոգիաները նպաստում են կրթության որակի բարձրացմանը, դրանց կիրառումը որակապես փոխում է ուսուցչի դերը:

Համացանցը տեղեկատվության անփոխարինելի աղբյուր է ուսումնական տեսակետից:

Համակարգիչը և բջջային հեռախոսը հնարավորություն են տալիս հաղթահարել մեկուսացումը և ձեռք բերել ընկերներ, խորհրդատվություն ստանալ մասնագետից առցանց, կիսվել սեփական փորձով և ստանալ օգնություն կամ խորհուրդ նմանատիպ խնդիրների հետ բախվող որևէ անձից:

Համացանցը և համակարգիչը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են: Տարբեր կենդանիների, հեքիաթային հերոսների պատկերներն ու նկարները, սովորողներին հուզող բազմաթիվ հարցերի, ինչուների պատասխանները կարող են գտնվել համացանցում:

Սովորողների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ:

Լինելով 20-րդ դարի վերջի ամենաբարդ տեխնոլոգիաներից մեկը՝ այն միաժամանակ ամենատարածվածներից է, իսկ իր ապագա ազդեցությունների հնարավորությամբ՝ ապահովաբար առաջինը:

Երբ մարդկային գործունեության գրեթե բոլոր ձևերը այս կամ այն չափով միջնորդված են համակարգչային սարքավորումներով, այն դադարում է սուսկ հզոր տեխնիկական միջոց լինելուց և դառնում ընկերային կյանքի վրա մեծապես ազդող գործոն, արմատական հասարակական փոփոխությունների գորեղ խթան:

Համակարգչի հիման վրա ուսման միջավայր ստեղծելու գաղափարը, որ հետագայում ծավալուն մշակումների առիթ տվեց, ձևավորվեց նաև շնորհիվ սովորողի իմացական զարգացման հոգեբանական տեսությունների:

Համակարգիչների ի հայտ գալը և կայծակնային տարածումը՝ տնտեսության զարգացման տեսանկյունից, անշուշտ, դրական երևույթ է, սակայն համակարգչային տեխնոլոգիաներից օգտվողների թվի աճի և համակարգչային համացանցի ընդլայնման հետ հանդիպում ենք նաև մարդու հոգեկան ոլորտի վրա համակարգչի բացասական ազդեցության երևույթների:

Ուսումնական գործընթացում Նորագույն տեխնոլոգիաների ներուժի օգտագործման շրջանակը բավականին լայն է:

Դասարանում անցկացվող հոգեբանական և մանկավարժական ուսումնասիրությունները ցույց են տվել ,որ հիմնական դպրոցում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է.

- Սովորելու մոտիվացիայի բարձրացում,
- Ճանաչողական գործունեության բարձրացում
- Տեսողական,տեղեկատվական մտածողության զարգացում,
- Կրտսեր սովորողների մեջ ինքնակրթության և ինքնատիրապետության հմտությունների զարգացում,
- Դասում ավելի փոքր աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության բարձրացում,
- Ուսուցման հարմարավետության մակարդակի բարձրացում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դասերը ոչ միայն ընդլայնում և համախմբում են ձեռք բերված գիտելիքները,այլև զգալիորեն բարձրացնում են սովորողների ստեղծագործական և մտավոր ներուժը:Քանի որ նրանց մեջ ապացուցելու երևակայությունն ու ցանկությունը մեծ է ,արժէ սովորեցնել հնարավորինս հաճախ արտահայտել սեփական մտքերը, ներառյալ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ:Այն աշակերտները,ովքեր ունեն խորը գիտելիքներ, նրանց մոտ ձևավորում են համառ,ճանաչողական հետաքրքրություններ և զարգանում է գործնականում ձեռք բերված գիտելիքները ինքնուրույն կիրառելու ունակությունը:

Նորագույն տեխնոլոգիաները իրենց աշխատանքում օգտագործող ուսուցիչները եկել են այն եզրակացության, որ տեղեկատվական տեխնոլոգիաները միայն փնտրողների համար են,այն ուսուցիչների համար են, ովքեր ուզում են նոր բան սովորել:

Ուսումնական գործընթացում SՀՏ ներուժի օգտագործման շրջանակը բավականին լայն է :Այնուամենայնիվ , դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելիս մենք պետք է հիշենք <<ՄԻ ՎՆԱՄԻՐ>> պատվիրանը:



Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների բացասական ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում

Համացանցի լուրջ բացասական կողմերից մեկն այն է, որ այստեղ չի վերահսկվում ինֆորմացիան, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելքներ: Համացանցը լի է անորակ, չճշգրտված ինֆորմացիաներով: Մարդկությունը բավական շուտ գիտակցեց համակարգչի վնասակար ազդեցությունը ֆիզիկական առողջության վրա, սակայն դեռևս քիչ են խոսում հոգեկան աշխարհի վրա համակարգչի ազդեցության մասին: Մինչդեռ վերջերս հոգեբույժներն ու հոգեբանները ահազանգում են մի նոր , քիչ ուսումնասիրված հիվանդության՝ համակարգչային կախվածության մասին: Միաժամանակ համակարգչի և համացանցի ազդեցությունը սովորողի հոգեկան զարգացման վրա բացասական հետևանքներ կարող է ունենալ: Նախ համակարգչի առջև շատ ժամանակ անցկացնելու արդյունքում երեխաների մոտ ընդհանուր թուլություն և հոգնածություն է դրսևորվում, քնի խանգարումներ: Բացասական հետևանքները կարող են իրենց հետքը թողել հոգեկան գործընթացների վրա՝ մասնավորապես սովորողի հիշողությունն է վատանում, դպրոցում դասերի ժամանակ դժվարությամբ են կենտրոնացնում ուշադրությունը, հասկանում ու դատողություններ անում, հոգեվիճակների, անձնային հատկությունների ձևավորման վրա, միջանձնային հարաբերությունների ոլորտում:

Նախադպրոցականն տարիքը առավել ևս դեռահասության տարիքը, սեռային ինքնագիտակցության , սեռական նույնականության ձևավորման , սեռային դերերի ու բնութագրերի յուրացման կարևոր շրջաններն են:

Եվս մեկ խնդիր է համացանցային ,այսպես կոչված, ժարգոնը կամ լեքսիկոնը՝
բառապաշարը:

Բնֆորմացիոն աշխատանքի իր բոլոր դրսևորումներով ազդում է սովորողի արժեքային համակարգի, արժեքային կողմնորոշումների ու դիրքորոշումների ,նպատակների ու ցանկությունների , երազանքների ու իդեալների ձևավորման , մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա:Այսինքն համացանցը ազդում է երեխայի աշխարհայացքի ձևավորման վրա:

Բուռն երևակայության շրջան համարվող մանկական տարիքում համակարգչային խաղերն իրենց գունավոր աշխարհներով,հերոսներով, հաղթանակներով ու պարտություններով, հետաքրքիր վիրտուալ մրցակիցներով կարող են ամբողջովին կլանել երեխային:Արդյունքում՝ երեխաների մոտ կարող է ձևավորվել այն դիրքորոշումը, որ եթե վիրտուալ աշխարհում կարելի է , թույլատրելի է սպանել, կործանել ու քանդել, ապա դա կարելի է անել նաև իրական աշխարհում:Դրանք կարող են նաև մանկական վախերի առաջացման պատճառներից մեկը լինել:Մեծ մասամբ երեխաների մոտ հոգեբանական կախվածություն առաջանում է դերային խաղերի նկատմամբ:

Համակարգչային խաղերից կախվածության հիմնական նշաններն են՝

- ❖ Համակարգչով աշխատելու ընթացքում տրամադրության բարձրացում
- ❖ Համակարգչից կամ խաղից կտրվելու անկարողություն, իսկ կտրվելու դեպքում՝ ագրեսիայի հասնող դյուրագրգիռ վիճակի առաջացում
- ❖ Տնային գործերի անտեսում
- ❖ Մարդկանց հետ շփվելիս առավելապես համակարգչի հետ կապված թեմաների քննարկում
- ❖ Հրաժարում ընկերների հետ շփումից
- ❖ Համակարգչի օգտագործումն առաջացնում է դիսթրես
- ❖ Համակարգչի օգտագործումը վնաս է պատճառում մարդու

ֆիզիկական,հոգեբանական, միջանձնային,ընտանեկան, տնտեսական սոցիալական կարգավիճակին

Հետևյալ նշանները վկայում են առաջացած կախվածության մասին.

- Աննդմիշտ օնլայն լինելու ցանկություն
- Անհանգստություն, ջղայնություն, ագրեսիվություն
- Բացակայության պարագայում ուշադրության պակաս
- Անձնական հիգիենային չհետևելը
- Անառողջ սննդային վարքագիծ
- Դպրոցական առաջադիմության անկում
- Կոնվներ, վեճեր ընտանիքի անդամների հետ համակարգչի պատճառով
- Իրական մարդկանց հետ շփվելու ցանկության բացակայություն
- Կախվածության ֆիզիկական նշաններից են աչքերի չորությունը, քնի

խանգարումները, մեջքի, պարանոցի, դաստակի ցավերը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի համակարգչից կախվածության հոգեբանական հարցը, որը հաճախ համեմատվում է հիվանդագին խաղամոլության հետ:

Գիտնականների վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ համացանցը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ մտածողության և զգացմունքների վրա՝ առաջացնելով նույնիսկ հոգեկան հիվանդություններ:

Չինացի գիտնականները որոշակի կապ են հայտնաբերել ինտերնետ-կախվածության և «գորշ բջիջների կառուցվածքային անկանոնությունների» միջև. այսպես՝ ուղեղի ոլորանները, որ պատասխանատու են խոսքի ընկալման, հիշողության, ունակությունների, զգացմունքների և այլնի համար, 10-20%-ով փոքրանում են: Ընդ որում՝ քայքայումն այդպիսով չի դադարում՝ որքան շատ ժամանակ է մարդ անցկացնում համացանցում, այնքան ավելի ուժգին կերպով է հյուծվում նրա ուղեղը, այնքան ավելի է ընկնում նրա տրամադրությունը, քանի որ այդ կերպ նա խոչընդոտում է սեփական քնին, ֆիզիկական ծանրաբեռնվածությանն ու դեմ առ դեմ հաղորդակցությանը:

Ցավոք, համակարգիչը, և հատկապես՝ համացանցը, աստիճանաբար մեկուսացնում են երեխաներին իրականությունից, տանում դեպի երևակայական, վիրտուալ աշխարհ:

Ուսումնասիրությունները հաստատում են , որ համակարգչից չափից ավելի օգտվելը կարող է առաջացնել ագրեսիա, որն ավելի շատ նկատվում է հուզական, վարքային և ներքին մղման կառավարման խնդիրներ ունեցող երեխաների շրջանում:



Ի՞նչ անել.

Մեդիագրագիտությունը անհրաժեշտ է բոլորին, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաներին: Եթե նախադպրոցական կամ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները ինչ-որ չափով վերահսկվում են ծնողների կողմից, ապա հիմնական և ավագ դպրոցի սովորողները առավելապես ազատ են իրենց ընտրությունների և որոշումներ կայացնելու հարցում, հետևապես այստեղ է անհրաժեշտ մեդիագրագիտությունը: Մեդիագրագետ քաղաքացին ունի բարձր գիտակցված մակարդկ, իր գործողություններում ավելի վստահ է, ցանկացած իրավիճակում կարողանում է արագ կողմնորոշվել և տեղեկատվական հոսքերից քաղել այն, ինչ իրեն պետք է և օգտակար: Այս հարցում մեծ անելիքներ ունի դպրոցի ուսուցիչը:

Ուսուցիչը ամենօրյա մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ իր առարկաներին ինտեգրելով մեդիագրագիտության տարրերը, կկարողանա դաստիարակել առողջ քննադատություն ունեցող սերունդ: Մեդիագրագետ սերունդը, հետևելով տեղեկատվական տեխնոլոգիաներից ճիշտ օգտվելու կանոններին, կարող է խուսափել մի շարք խնդիրներից:



Եզրակացություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը առանձնահատուկ է կրթության և գիտության ոլորտներում: Ակնհայտ է, որ առանց կրթության գիտությունը չի կարող զարգանալ, այդ իսկ պատճառով համացանցում շատ արագ տեղադրվեցին մեծածավալ կրթական պաշարներ, որոնք անընդհատ թարմացվում են: Դրանց մեջ ներառվել են առցանց գրադարաններ, հեռավար ուսուցման դասընթացները և բազմաբնույթ այլ ուսումնական նյութեր:

Դպրոցական կայքերում հրապարակվում են ուսումնական նյութեր, դասերի պլաններ, ուսուցիչների փորձի փոխանակում այլ դպրոցների գործընկերների հետ, իսկ սովորողները ներկայացնում են իրենց ստեղծագործությունները, նամակագրություն են հաստատում հասակակիցների հետ, մասնակցում համատեղ միջազգային նախագծերի:

XXI դարը բեկումնային կլինի մարդկության զարգացման համար: Այսպիսով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը և ազդեցությունը սովորողի հոգեբանական զարգացման գործում կարող է վճռորոշ և, նույնիսկ, ճակատագրական դեր ունենալ:

Հետևաբար, վերը նշված խնդիրները պահանջում են բոլորի ուշադրությունը՝ փիլիսոփաների, հոգեբանների, սոցիոլոգների, քաղաքական գործիչների և իհարկե՝ մանկավարժների: Փոխակերպված միջավայրում, որտեղ սովորողներին մատչելի են նորանոր ծառայություններ ու փորձառություններ՝ նրանք մեծանում են իրենց ծնողներից տարբեր ձևերով: Սա պատճառ է դառնում խզումների մեծահասակների ու երեխաների՝ ծնողների ու զավակների, ուսուցիչների ու սովորողների այսօրվա սերունդների միջև, ու հանգեցնում է հասարակական մեծ փոփոխությունների: Ժամանակակից տեխնոլոգիաների ճնշման տակ կատարվող մանկան հոգեբանության փոփոխությունները առաջիկայում կարող են հանգեցնել լուրջ հետևանքների թե՛ երեխաների, թե՛ ծնողների համար: Այդ խնդրով անհրաժեշտ է զբաղվել այսօր, հոգուս ապագայի:

Կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ սովորողների աշխարհայացի, կրթական մակարդակի, վարքագծի, ինչպես նաև շրջակա միջավայրում ինտեգրվելու մեջ մեծահասակների դաստիարակությունից և ցույց տված օրինակներից զատ շատ կարևոր են տեղեկատվական տեխնոլոգիաները: Այս ամենի հետ մեկտեղ պետք է գիտակցել, որ երեխան ընդօրինակում է այն, ինչ տեսնում է իր շրջապատում: Այս հարցում մեծ անելիքներ ունեն և ծնողները, և մանկավարժները: Կարևոր է, որ մեր երեխաները մեծանան խելացի, հետաքրքրաբեր, բանիմաց, կարողանան առանձնացնել գլխավորը երկրորդականից, կարողանան իրենց սեփական կարծիքը հայտնել, դատողություններ անել և լինել հոգեպես կայուն և առողջ:

Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է օգտագործել հոգուս սովորողի անհրաժեշտ է մշակել այնպիսի ռազմավարություն, որը թույլ կտա օգտվել նոր ժամանակների ընձեռած լավագույն հնարավորություններից՝ զերծ մնալով վնասներից: Ուստի մեղիագրագիտությունը կարևոր նախապայման է կիրթ և լիարժեք հասարակություն ունենալու համար:

Օգտագործված գրականություն

1. Բալյան Ա.Ա., <<Մանկավարժական հոգեբանության հարցեր>>, Երևան:Լույս 1983
2. Մանտուլենկո Վ. <<Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում>>
3. Մեթոդ ձեռնարկ <<Դեռահասների առողջություն և զարգացում>>, Երևան 2014
4. Ուսումնական ձեռնարկ <<Ընդհանուր հոգեբանություն>>Երևան,Լույս 1974
5. Համացանց: Հիմնականում օգտագործվել է էլ. գրականություն
6. <https://old-lib.armedu.am/resource/>
7. <http://editprint.am/students-data>
8. <https://www.dasaran.net/apps/wiki/view/id/6750>
9. https://docs.google.com/document/d/1H45qQQQ13BG6cE0Q_AHnO0uM0ffZSC3Xb6IKq8Jt4YY/edit#heading=h.j87i2gs1rzcp
10. <https://hy.wikipedia.org/wiki/>

Հավելված

Ստորև առաջարկում ենք թեևս, որով կարող եք պարզել ունե՞ք, արդյո՞ք համակարգչային կախվածություն, թե՞ ոչ:

1. Նստելով համակարգչի առջև կամ ցանցում գտնվելիս որքա՞ն հաճախ եք ակտիվանում, թեթևանում և բավականություն ստանում:
 - a. երբեք՝ 1
 - b. երբեմն՝ 2
 - c. հաճախ՝ 3
 - d. շատ հաճախ՝ 4
2. Որքա՞ն հաճախ եք համակարգչի աշխատանքը ինքնուրույն դադարեցնում կամ ցանցից դուրս գալիս:
 - a. երբեք՝ 1
 - b. երբեմն՝ 2
 - c. հաճախ՝ 3
 - d. շատ հաճախ՝ 4
3. Որքա՞ն հաճախ եք նյարդայնանում, տխրում կամ դատարկություն զգում առանց համակարգչի կամ ցանցի:
 - a. երբեք՝ 1
 - b. երբեմն՝ 2
 - c. հաճախ՝ 3
 - d. շատ հաճախ՝ 4
4. Որքա՞ն հաճախ եք պահանջ զգում համակարգչի առջև վերադառնալու կամ ցանցում գտնվելու համար:
 - a. երբեք՝ 1
 - b. երբեմն՝ 2
 - c. հաճախ՝ 3
 - d. շատ հաճախ՝ 4
5. Համակարգչով աշխատելու կամ ցանցում գտնվելու պատճառով որքա՞ն հաճախ եք խուսափում ընտանեկան ,հասարակական , աշխատանքային կամ ուսանելու պատասխանատվությունից:
 - a. երբեք՝ 1
 - b. երբեմն՝ 2
 - c. հաճախ՝ 3
 - d. շատ հաճախ՝ 4
6. Որքա՞ն հաճախ եք ստում, երբ հարցնում են համակարգչի առջև անցկացրած ժամանակի վերաբերյալ:
 - a. երբեք՝ 1
 - b. երբեմն՝ 2
 - c. հաճախ՝ 3
 - d. շատ հաճախ՝ 4

7. Որքա՞ն հաճախ եք ձեռքերի կամ դաստակների թմրածություն, գլխացավ, ողնաշարի ցավ, տեսողական խնդիրներ ունենում, կամ ժամանակը խնայելու նպատակով սնվում համակարգչի առջև նստած:
- a. երբեք՝ 1
 - b. երբեմն՝ 2
 - c. հաճախ՝ 3
 - d. շատ հաճախ՝ 4
8. Որքա՞ն հաճախ է խանգարվում քնի ռեժիմը, քանի որ աշխատում եք համակարգչով կամ գտնվում ցանցում:
- a. երբեք՝ 1
 - b. երբեմն՝ 2
 - c. հաճախ՝ 3
 - d. շատ հաճախ՝ 4

Եթե հավաքել եք 0-14 միավոր՝ համակարգչային կախվածության վտանգ չկա, 15-20 միավոր՝ տարված եք համակարգչով, 21-26 միավոր՝ համակարգչային կախվածության վտանգը մեծ է, 27-32 միավոր՝ առկա է համակարգչային կախվածություն: